community

The New Apostolic Church around the world

01/2023/AM

2023 թվականի տարվա նշանաբանը՝

Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Խմբագրական
Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Ժամերգություն
Հավատքով քայլել

Եկեղեցական ուսմունք
Կանանց ձեռնադրություն՝ Հիմքերը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Ժամերգություն

4 Հավատքով քայլել

Այց՝ Աֆրիկա

10 Աստծո խոսքը պարզ լեզվով

Մանկական անկյուն

12 Հիսուսը լվանում է աշակերտների ոտքերը

14 Այցելություն Դավթին՝ Նդոլայում / Զամբիա/

Տեսություն

16 Կանանց ձեռնադրություն՝ Հիմքերը

■ Առջևի շապիկի լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի
■ Հետևի շապիկի լուսանկարը՝ ՆԱԵ Հարավ - Արևելյան Ասիա

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանսսթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233 63263 Նոյ Իզենբուրգ/Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Ծառայել և կառավարել Քրիստոսի հետ

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Մենք հայացք ենք գցում անցնող տարուն, որի ընթացքում մենք այս կամ այն ձևով կարողացել ենք ապրել մեր Տիրոջ մոտիկ լինելն ու առաջնորդելը: Բոլոր դեպքերում, մեկ բան կարևոր է, որ 2022-ին էլ Աստված շարունակում է իր փրկչական գործը և մեզ մոտեցնում մեր նպատակային մասնակցությանը առաջին հարությանը, որպեսզի որպես քարոզիչներ ծառայենք Քրիստոսին և նրա հետ միասին ղեկավարենք խաղաղության թագավորությունում, ինչպես մենք կարդում ենք Հայտնության 20,6-ում:

Ով խաղաղության թագավորությունում զինվածէ Քրիստոսի հեղինակությամբ, կարող է անխոչընդոտ կատարել իր ծառայությունն ու առաջադրանքը: Ծառայությունը կայանում է նրանում, որ մարդկանց քարոզվի Ավետարանը և նրանց առաջնորդվի դեպի Աստված: Ղեկավարելը չի նշանակում աշխարհին տիրելը, այլ՝ վկայել Քրիստոսի փառահեղությունը՝ որպես մարմնավորում Աստծո սիրո և գթասրտության:

Այսօր արդեն Հիսուսը մեզ կանչում է իր ձևով ծառայելու և ղեկավարելու: Սրանից էլ բխում է 2023-ի մեր նշանաբանը՝ Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել:

Արդեն այսօր մենք ծառայում ենք նրանով, որ թողնում ենք մեր առօրյա գործերը ժամերգության գալու և միասին Աստծուն երկրպագելու համար:

Նաև 2023 թվականին ենք մենք արդեն կանչված թագավորելու Քրիստոսի հետ: Այնուամենայնիվ, ոչ թե մեր մերձավորների վրա իշխանություն գործադրելով, այլ Քրիստոսի օգնությամբ մեր սեփական մտքերի և գործերի տերը դառնալով.

- Նրա սերը չի բաժանում, այլ միավորում է:
- Նրա շնորհը մեզ վեր է բարձրացնում պարտություններից հետո:
- Նրա իմաստությունը օգնում է մեզ սովորել մեր սխալներից:

Այսպիսով, մենք փորձության ենթարկվելիս անօգնական չենք, այլ կարող ենք իշխել մեղքի վրա մեր սրտի դռան առաջ:

Մեր կյանքը ստուգման տակ պահելու և վերահսկելու լավագույն ճանապարհը թույլ տալն է, որ Քրիստոսը թագավորի մեր սրտերում:

Բոլոր առաքյալների հետ միասին մաղթում եմ ձեզ օրհնյալ և երջանիկ նոր տարի:

Լավագույն ողջույններով՝

Ժան- Լյուք Շնայդեր

Հոկտեմբերի 16-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Թուփիում տոնեց Ֆիլիպինների ՆԱԵ-ի հոբելյանական ժամերգությունը

Լուսանկարները՝ ՆԱԵ Ֆիլիպիններ

Կորնթացիներին Բ 5,7

,, Որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե երևույթների վրա հիմվում,,

Հավատքով քայլել

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես պետք է խոստովանեմ, որ ինձ համար իսկապես մեծ ուրախություն է նորից ձեզ հետ այստեղ՝ Ֆիլիպիններում լինել կարողանալու համար: Դուք գիտեք, որ երկար ժամանակ հնարավոր չէր ճանապարհորդելը: Ես շատ շնոհակալ եմ, որ այսքան շատ համայնքներ այստեղ կարողացել են միմյանց հետ կապված մնալ, Ինդոնեզիայում և այլ երկրներում: Մենք միասին պետք է այս օրը տոնական օր դարձնենք: Մենք տոնում ենք եկեղեցու հիսունամյակը Ֆլիպիններում, իսկ սա առիթ է մեր շնորհակալությունն արտահայտելու: Հիսուն տարի առաջ Աստծո հավատարիմ ծառաները եկան այս երկիր և ֆիլիպինցիներին հայտնեցին մեծ ավետիսը՝ Հիսուսը գալու է: Եվ նա ուղարկել է իր առաքյալներին, որպեսզի մեզ նախապատրաստեն նրա գալստյանը: Նա գալու է և մեզ առաջնորդելու է դեպի իր արքայություն: Մենք պետք է նմանվենք Հիսուս Քրիստոսի պատկերին: Մենք ունենալու ենք կատարյալ միասնություն նրա և միմյանց հետ: Եվ փառք Աստծո, ֆիլիպինցիների շարքում շատ մարդիկ ընդունեցին և հավատացին նրանց: Իսկ Աստծո գործը կարողացավ քայլ առ քայլ զարգանալ: Մենք այսօր շատ համայնքներում ունենք շատ

ձախում՝ սպասավոր եղբայրների սենյակում

Բայց հիսուն տարի անց խոստումը դեռ չի կատարվել:

քույրեր և եղբայրներ: Եվ մեծ ուրախություն է այս երկրում այսքան շատ հավատարիմ եղբայրներ և քույրեր ունենալը:

Մենք մեր շնորհակալությունն ենք արտահայտում նրանով, որ շնորհակալություն ենք հայտնում նրանց, ովքեր ցանել էին և նրանց, ովքեր հետո եկել են և ջրել: Բայց ամենից առաջ մենք շնորհակալ ենք Աստծուն, որը նվիրել է այդ աճը: Առանց նրա օգնության և օրհնանքի՝ ոչ մի բան հնարավոր չէր լինի: Այսպես, մենք շնորհակալ ենք Աստծո ծառաներին, եղբայրներին ու քույրերին, ովքեր դեռ ապրում են և նրանց, ովքեր արդեն անդրշիրիմյան աշխարհում են, իսկ մենք փառաբանում ենք Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, իր ողորմածության և օրհնանքի համար:

Հիսուն տարի առաջ նրանք տեղեկացրեցին, որ Հիսուսը գալու է, որ նա ուզում է մեզ առաջնորդել դեպի իր թագավորություն, որ մենք նմանվելու ենք Քրիստոսի պատկերին, և որ մենք՝ որպես Քրիստոսի եկեղեցի, միասնություն ենք ունենալու Աստծո և միմյանց հետ: Բայց, հիսուն տարի անց այդ խոստումը դեռ չի իրականացել: Եվ յուրաքանչյուրը կարող է տեսնել, որ Տերը դեռ չի եկել: Ես դեռ Հիսուս Քրիստոսի նման չեմ: Ես դեռ նույն խեղճ մեղավորն եմ: Իսկ միասնությունը եկեղեցում սիրալիր է, բայց բոլորովին ոչ կատարյալ: Ի՞նչ եղավ այդ խոստման հետ: Պատասխանը այսպես է հնչում՝ այնքան ժամանակ, ինչ մենք երկրի վրա ենք, պետք է քայլենք հավատքով և ոչ թե՝ տեսնելով: Այդ խոստումը դեռ ուժի մեջ է: Բայց մենք պետք է հավատանք և առաջ քայլենք, որ այդ խոստման իրականացումն ապրենք: Դա միշտ այդպես է եղել:

Հիշեք Աբրահամին՝ Աստված նրան հրաշալի խոստում տվեց, այն է՝ դու որդի ես ունենալու և դառնալու ես մի մեծ ժողովրդի հայր: Բայց Աբրահամն արդեն ծեր էր: Մարդկային տեսանկյունով դա հնարավոր չէր: Բայց Աստված ասաց նրան՝ ,, Ես չեմ կարող այստեղ քեզ օրհնել, դու պետք է քո երկրից հեռանաս և գնաս այն երկիրը, որը ես քեզ ցույց կտամ,,: Աբրահամը չգիտեր, թե որտեղ է գտնվում այդ երկիրը, ինչ տեսք ունի, բայց նա հավատում էր և գնում: Եվ շատ երկար տևեց, մինչ իրականացավ այդ խոստումը: Հիսուսն ինքն ասում էր՝,, Աբրահամն ուզում էր միայն ինձ՝ Հիսուս Քրիստոսիս՝ Աստծո Որդուն տեսնել,,: Իսկ Աբրահամը ստիպված էր դարեր շարունակ սպասել, որ նրա փափագը կատարվի, և նա կարողանա երկրի վրա տեսնել Հիսուս Քրիստոսին՝ Փրկչին: Նա պետք է սպասեր և մինչև վերջ հավատար, որպեսզի ապրեր խոստման կատարումը:

Աստված գալիս է Մովսեսի և Իսրայելի ժողովրդի մոտ և ասում նրանց, որ առաջնորդելու է դեպի մի հրաշալի երկիր՝ խոստացված երկիրը: Բայց, դուք պետք է դուրս գաք Եգիպտոսից, և դուք պետք է ոտքով գնանք: Եվ նրանք պետք է երկար ժամանակ հավատային և սպասեին, մինչև նրանց ցանկությունն իրականար և կարողանային ապրել Աստծո խոստումը: Սակայն, Աստված հավատարիմ էր, նա իրականացնում է Աբրահամին և Իսրայելի ժողովրդին տված խոստումը, բայց նրանք նախ պետք է հավատային և հավատքով առաջ քայլեին:

Ես միտումնավոր կրկնեցի, որ այն խոստումը, որը Աստված իր առաքյալների միջոցով է տվել, դեռ վավերական է: Բայց այն դեռ չի իրականացել, մենք պետք է այսօր հավատքով առաջ քայլենք: Ի՞նչ է նշանակում դա: Դա նշանակում է, որ մենք իսկապես համոզված ենք, որ այն, ինչ Աստված ասում է, ճմարիտ է: Աբրահամի համար Աստծո խոսքն ավելի կարևոր էր, քան այն, ինչ նա իր աչքերով կարող էր տեսնել: Հավատալ, նշանակում է, որ ես բացարձակ համոզված եմ, որ Աստծո խոսքը ճշմարտություն է, ոչ թե է այն, ինչը ես տեսնում եմ, հասկանում եմ, այլ այն, ինչ Աստված է ասում: Աստծուն հավատալը նշանակում է նաև նրա հանդեպ վստահություն ունենալ: Աստծուն հավատալ, նշանակում է, որ ես վստահում եմ այն բանին, ինչ նա անելու է, ինչը նա խոստանում է, և որ նա դա կարող է անել: Ինչ վերաբերում է Աբրահամին, ապա անհնար էր թվում այն, որ նա և իր կինը այդ տարիքում դեռ կարող էին երեխաներ ունենալ: Բայց նա վստում

Մենք սպասում ենք համբերությամբ, մինչև նա կատարի իր խոստումը:

էր Աստծուն, որ նա կարող է դա անել, և նա դա անելու է: Հավատալ նշանակում է նաև, որ ես այն բանում եմ համոզված, որ այն, ինչ Աստված ասում է, ճմարտություն է: Ես վստահում եմ նրան, նա կարող է անել և անելու է: Եվ քանի որ ես համոզված եմ և վստահություն ունեմ, ես համբերատար եմ և սպասում եմ: Դա հավատ է և դա այն է, ինչ մենք պետք է անենք՝ համոզված լինել, որ Աստծո խոսքը ավելի կարևոր է, քան այն, ինչ ես տեսնում և հասկանում եմ: Մենք վստահում ենք Աստծուն, որ նա կարող է անել և կանի, ինչ խոստացել է, իսկ մենք սպասում ենք համբերությամբ, մինչև նա իր խոստումն իրականացնի:

Սա հավատն է, բայց մենք պետք է դեռ հավատով քայլենք: Իսրայելի ժողովուրդը պետք է հավատար, որ Աստված նրանց ազատելու է, բայց նրանք պետք է դուրս գային Եգիպտոսից, իսկ նրանք կարիք ունեին արիության այդ անելու համար: Պարզապես չասվեց՝ ,, Լավ, եկեք գնանք, եկեք պարզապես դուրս գանք,,: Եգիպտոսից դուրս գալու որոշումը դժվար էր: Սակայն, նրանք համարձակվեցին հավատով առաջ գնալ: Եվ Աստված նրանց ազատեց Եգիտպոսից: Դուք գիտեք Կարմիր ծովի հետ կապված պատմությունը, ես այն նորից չպետք է պատմեմ: Նրանք ազատվեցին ճնշումներից: Բայց դա պատմության ավարտը չէր, դա պատմության սկիզբն էր: Երբ նրանք եկան Կարմիր ծովի մյուս ափը և ազատվեցին Եգիպտոսից, այնտեղ անապատ էր: Իսկ նրանք պետք է շարունակեին հավատով առաջ գնալ:

Եղբայրներ և քույրեր, մենք ունենք այս խոստումը՝ Աստված ուզում է ձեզ ազատել և առաջնորդել դեպի իր արքայություն: Բայց դուք պետք է չարի թագավորությունից դուրս գաք, որպեսզի հասնեք բարի Աստծո արքայություն: Մենք ասել ենք՝,, Այո, ես մերժում եմ չարին,,: Եվ այդ հավատի և պատրաստակամության շնորհիվ Աստված մեզ ջրով մկրտության և Սուրբ Հոգու միջոցով ազատեց: Մենք չենք կարող տեսնել, բայց ջրով մկրտության և Սուրբ Հոգով կնքվելու միջոցով մենք ազատվում ենք չարի տիրապետությունից: Բայց, դա պատմության վերջը չէր, սա պատմության սկիզբն էր: Իսկ հիմա մենք պետք է առաջ գնանք, ինչպես Իսրայելի ժողովուրդը: Իսկ ի՞նչ է նշանակում առաջ գնալ: Իսրայելի ժողովրդի նման մենք պետք է հետևենք Աստծո ցուցումներին: Աստված նրանց ամեն օր ասում էր, թե ինչ պետք է նրանք անեն, և նրանք դա անում էին: Եվ մենք ևս պետք է առաջ գնանք, որպեսզի Աստծո ցուցումներին հետևենք: Նա մեզ սովորեցնում է, թե ինչպես պետք է սիրենք: Նա սովորեցնում է մեզ, թե ինչպես պետք է կարողանանք աճել Հիսուս Քրիստոսի գիտության մեջ: Սուրբ Հոգու միջոցով նա մեզ ասում է, թե մենք ինչպես կարող ենք նմանվել Հիսուս Քրիստոսի պատկերին: Մենք էլ պետք է մեր քայլն անենք: Մենք պետք է սովորենք ավելի շատ և ավելի լավ սիրել: Մենք պետք է մեր գիտելիքները Հիսուս Քրիստոսի մասին բազմապատկենք: Մենք պետք է հաղթահարենք հին բնությանը և Քրիստոսով նոր մարդ դառնանք: Իսրայելի ժողովուրդը ստիպված էր անցել անապատի միջով և պայքարել թշնամու դեմ: Մենք էլ պետք է չարի դեմ

պայքարենք և հաղթահարենք փորձությունները: Իսկ դա շարունակական պրոցես է, մենք պետք է առաջ գնանք և հաղթահարենք, հաղթահարենք ու հաղթահարենք: Եվ մեկ այլ պատճառ էլ կա, թե ինչու է Աստված ուզում, որ նրանք անապատով քայլեն և անցնեն: Նա ուզում էր, որ նրանք դառնան ճշմարիտ ժողովուրդ, ճշմարիտ համայնք: Քանի որ սկզբում կային շատ ցեղեր, իսկ նրանցից յուրաքանչյուրը Եգիպտոսում քայլում և ապրում էր ինքն իր համար, իսկ անապատում թափառելու ընթացքում նրանք սովորեցին միասնական դառնալը: Նրանք հասկացան, որ մեկը մյուսի կարիքն ունի, որ իրենք պատկանում են միմյանց:

Ես ավարտում եմ՝ մենք պետք է հավատանք և հավատով առաջ քայլենք, որպեսզի շատացնենք մեր սերն ու գիտելիքները առ Հիսուս Քրիստոս, առաջ գնանք մեր հոգևոր զարգացման մեջ: Մենք պետք է ձգտենք և պայքարենք մեր թշնամու դեմ, և մենք պետք է սովորենք միասնական դառնալ Քրիստոսով: Իհարկե, երբ Իսրայելի ժողովուրդը գնում էր անապատով, նրանք չէին կարող Աստծո խոստումը տեսնել, բայց նրանք կարող էին զգալ Աստծո ներկայությունը: Իսկապես, նրանք չէին կարող տեսնել, բայց նրանք կարող էին նրա ձայնը Մովսեսի միջոցով լսել: Իսկ Մովսեսը նրանց ասում էր՝,, Աստված ասում է ձեզ, թե դուք ինչ պետք է անեք,,: Այսօր էլ մենք չենք կարող Աստծուն տեսնել, բայց մենք լսում ենք նրա ձայնը Սուրբ Հոգու և առաքյալների միջոցով: Մենք կարողանում ենք հաճախ ապրել սա ,, Աստված ինձ հաստատ ասում է այն, ինչի կարիքը ես ունեմ, նա ամեն ինչ գիտի,,:Մենք կարող ենք ապրել, որ Աստված մեզ հետ է, որ նա խոսում է մեզ հետ: Աստծո ժողովուրդը կարողանում էր ճանաչել Աստծո ներկայությունը, քանի որ նա իր սնունդը ամեն օր Աստծուց էր ստանում: Նրանք ստանում էին մանանա, դա մի մեծ հրաշք էր: Սակայն, ցավոք, նրանք սովորեցին դրան և դա դարձավ նորմալ: Եվ նրանք լիովին մոռացան, որ դա հրաշք էր: Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք էլ ենք սնունդ ստանում երկնքից: Մենք ընդունում ենք Հիսուսի մարմինն ու արյունը, երբ տոնում ենք Սուրբ Հաղորդությունը: Դա հացն է երկնքից տրվող, մի մեծ հրաշք: Բայց, հավանաբար, մենք տարիներ ի վեր սովորել ենք դրան, որ դա նորմալ է, որ մենք գալիս ենք ժամերգության և ընդունում ենք Սուրբ Հաղորդությունը: Եղբայրներ և քույրեր, խնդրում եմ չմոռանաք, թե դա ինչ է նշանակում՝ այդ սնունդը Աստծու կողմից է պատրաստված, դա մի մեծ հրաշք է: Երբեք մի մոռացեք Սուրբ Հաղորդության հրաշքը:

Նրանք կարողացան նաև Աստծո օգնությունը հասկանալ: Հաճախ նրանք այնպիսի իրավիճակներում էին գտնվում, որից դուրս գալու համար ոչ մի ելք չէին կարողանում գտնել: Իսկ Աստված նրանց ցույց էր տալիս՝ ,, Ինձ համար ոչինչ անհնար չէ, ես կարող եմ ձեզ օգնել: Վստահեք ինձ,,: Դա այն էր, ինչ նրանք ապրեցի անապատում դեգերելու ժամանակ: Նրանք ապրեցին Աստծո ներկայությունը իրենց մեջ՝ Նրա խոսքի, մանանայի և նրա օգնության շնորհիվ: Դա վերաբերում է նաև մեզ: Իսկ Աստված մնում էր հավատարիմ, անգամ, եթե նրանք հավատարիմ չէին մնում: Աստված շատ պատճառներ ուներ ասելու՝,, Ես դադարեցնում եմ, դուք հավատարիմ չեք, դուք ինձ չեք վստահում, մնացեք այնտեղ, որտեղ որ էիք,,: Ոչ, Աստված երբեք նրանք միայնակ չթողեց: Անկեղծ ասած, մարդկային տեսանկյունից Աստված շատ պատճառներ ուներ ասելու՝,, Ես թողնում եմ նրանց գնալ, ես դադարեցնում եմ: Ես նրանց հաճախ եմ ասել, թե ինչ պետք է անեն և ինչ չպետք է անեն, իսկ նրանք հակառակն են անում,,: Նա կարող էր

Շրջանային առաքյալի օգնական Ջոն Ֆենդթը և շրջանային առաքյալ Էնրիքե Մինիոն հրավիրվեցին զոհասեղանի մոտ՝ սպասավորելու

Գլխավոր առաքյալը Ֆրեդդի Նույադին / կենտրոնում/, Մեդի Սաբալին / աջ կողմում/ ձեռնադրեց առաքյալներ

դա իմ մասին ասել, և ես ասում եմ ձեզ, նա շատ պատճառներ կունենար դա ասելու: Բայց, ինչպես Աստվածաշնչում է գրված՝ Հիսուսը չի ամաչում մեր եղբայրը լինելուց: Նա մնում է մեզ մոտ՝ չնայած մեր թուլություններին:

Մենք հավատում ենք, առաջ ենք քայլում, խոստումը դեռ չի իրականացել, բայց մենք կարող ենք Աստծո ներկայությունը մեր մեջ ապրել: Մենք ոչ մի պատճառ չունենք դադարեցնելու: Ես շատ ուրախացա, երբ լսեցի երգչախմբին, երբ նա կատարեց ,, Երբեք մի դադարեցրու,, երգը: Դուք հասկացաք այսօրվա ավետիսը՝ երբեք չդադարեցնել, շարունակեք քայլել հավատով: Մենք ոչ մի պատճառ չունենք դադարեցնելու և Եգիպտոս վերադառնալու: Եթե մեք որոշել ենք մերժել չարին, ապա Աստված մեզ կազատի չարի տիրապետությունից, ուրեմն՝ մի դադարեցրեք և մի վերադարձեք Եգիպտոս: Մի ասեք՝,, Հիսուսն իր խոստումը չի կատարել, ես ետ եմ գնում դեպի մեղք և օգտագործեմ չարի ճանապարհը, որպեսզի ստանամ այն, ինչ ուզում եմ,,: Ես վստահ եմ, որ դուք հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ: Մի վերադարձեք Եգիպտոս միայն այն բանի համար, որ այնտեղ ավելի հարմարավետ է և գեղեցիկ: Ես գիտեմ, որ ձեր կյանքը շատ ավելի պարզ կլիներ, եթե դուք մի քիչ ավելի շատ մեղք գործեիք: Խնդրում եմ, մի դադարեցրեք, շարունակեք գնալ հավատի ճանապարհով, մի վերադարձեք Եգիպտոս:

Իսրայելի ժողովուրդը բազմիցս փորձել է պարզ մնալ, որտեղ էլ եղել է: Նրանք ասում էին՝,, Խոստումը երբեք չի իրականանալու, այստեղ այնքան էլ վատը չէ, եկեք այստեղ մնանք,,: Բավականին տխուր է, երբ շատ քրիստոնյաներ դադարեցնում են: Նրանք այլևս չեն փափագում հավիտենական լինել Աստծո արքայությունում, Աստծո հետ կատարյալ միասնության մեջ: Նրանք դադարեցնում են, նրանք այլևս չեն ձգտում նմանվել Քրիստոսի կերպարին և ասում են՝,, Եկեք պարզապես այստեղ մնանք,,: Մենք հավատում ենք Աստծուն, մենք հնազանդ ենք, և մենք ուզում ենք, որ Աստված մեզ օգնի մեր երկրային կյանքում, որ նա լուծի մեր խնդիրները, որ նա մեզ իր օրհնանքը տա, բայց ամեն ինչ կենտրոնացվում է երկրային կյանքի, երկրային գործերի վրա: Իսկ Աստծո երկնային արքայության մեջ ապրելու հույսն անհետանում է: Խնդրում եմ, եղբայրներ և քույրեր, մի կորցրեք ձեր հույսը: Խոստումը դեռ վավերական է: Օգտագործեք ձեր հավատը և Հիսուս Քրիստոսին ոչ միայն երկրային գործերի համար: Մի դադարեցրեք: Մենք նախապատրաստվում ենք Քրիստոսի գալստյանը: Իսրայելի ժողովուրդը ևս փորձում էր ասել՝,, Մենք հոգնել ենք Մովսեսից, մենք ուրիշ առաջնորդ ենք ուզում: Մենք նրանից գոհ չենք, նա այլևս լավը չէ: Ինչ նա մեզ պատմել է, լավը չէր: Եկեք այլ առաջնորդ փնտրենք,,: Եկեք այսօր հավատարմորեն հետևենք առաքյալներին: Նրանք առաքված են, որպեսզի մեզ առաջնորդեն դեպի Աստծո արքայություն: Երբեմն նրանց ասածները մեզ դուր են գալիս, երբեմն՝ ոչ, բայց մենք գիտենք, որ նրանք ուղարկվել են, որպեսզի մեզ առաջնորդեն դեպի Աստծո արքայություն: Եկեք նրանց մինչև վերջ հետևենք: Մենք գիտենք, որ խոստումը դեռ կատարված չէ:

Հիսուսը դեռ չի եկել, մենք դեռ չունենք Քրիստոսի կատարյալ կերպարը, եկեղեցին դեռ կատարյալ

Ժամերգությունից հետո գլխավոր առաքյալի հետ են հանգստի անցած առաքյալներ Ալֆրեդո Պասկալը / ձախ կողմում/ և Քլեոֆաս Բուալը/ աջ կողմում/

չէ, մեր միասնությունը ևս դեռ կատարյալ չէ, խոստումները դեռ չեն իրականացվել, բայց մենք չենք դադարեցնում: Մենք հավատում ենք և առաջ գնում, մենք քայլում ենք հավատի ճանապարհով:

Սիրելի եղբայրներ և քույրեր, բողոքելու փոխարեն, որ խոստումները դեռ չեն կատարվել, եկեք ճանաչենք, թե ինչ է դա նշանակում մեզ համար: Իհարկե, մենք դեռ կատարյալ չենք, մենք դեռ չենք նմանվել Քրիստոսի կերպարին՝ չնայած տարիների այն աշխատանքին, որ մենք կատարել ենք այդ ուղղությամբ: Ի՞նչ է դա նշանակում ինձ համար: Դա նշանակում է, որ ես լիովին կախված եմ Հիսուսի ողորմածությունից: Ես կարիք ունեմ Հիսուս Քրիստոսի ողորմածության: Ես միայնակ չեմ կարող կատարյալ լինել: Ես կարիք ունեմ ողորմածության: Դա նշանակում է, որ ես պետք է հնազանդ լինեմ և աղոթեմ՝ ,, Հիսուս, տուր ինձ քո ողորմածությունը: Առանց քո ողորմածության ես կորած եմ,,: Քանի որ մենք գիտենք, որ մենք դեռ կատարյալ չենք, պետք է լինենք հնազանդ և խնդրենք Հիսուսի ողորմածությունը: Այո, մենք՝ սպասավորներս, դեռ կատարյալ չենք, դա ակնհայտ է: Դա նշաակում է, որ մենք չենք կրող գոհ լինել մեզնից: Մենք պետք է մեր գիտելիքները և Ավետարանի մեր ըմբռնումը զարգացնենք: Մենք պետք է դեռ սովորենք ավելի շատ և ավելի լավ սիրելը: Մենք էլ ենք կախված Հիսուս Քրիստոսի ողորմածությունից, բայց մենք ևս պետք է առաջ գնանք, որպեսզի ընդառաջենք մեր ծառայությանը: Անգամ, երբ մենք Տիրոջը ծառայում ենք քառասուն, հիսուն տարի, մենք պետք է դեռ սովորենք: Աստծո ծառաներ, սիրելի համածառայակիցներ, եկեք ողջախոհ լինենք, մենք դեռ այնպիսին չենք, ինչպիսին Աստված է ուզում մեզ տեսնել: Մի դադարեցրեք, շարունակեք առաջ գնալ: Սովորեք, սովորեք ու սովորեք: Իհարկե, եկեղեցին բոլորովին կատարյալ չէ, կարելի է այդ հարցով բողոքել: Բայց, Աստծո խելացի զավակներն ասում են՝,, Ես պետք է ավելի շատ բան անեմ եկեղեցու միության համար: Ես պետք է ավելի շատ բան անեմ իմ եղբոր, իմ քրոջ համար, ես պետք է նրանց ավելի շատ սիրեմ: Ես կարող եմ մերձավորի հանդեպ սիրո մեջ առաջադիմեմ,,: Բողոքելու փոխարեն մենք ասենք՝,, Ես կարող եմ ավելին անել և ավելի լավ անել, օգնիր ինձ այդ գործում,,:

Եղբայրներ և քույրեր, դա այսօրվա պատգամն է: Խոստումը, որ մեզ տրվել է շատ տարիներ առաջ, դեռ վավերական է, այնքան ժամանակ, ինչ մենք երկրի վրա ենք, մենք պետք է հավատանք և առաջ քայլենք, որպեսզի առաջ գնանք: Մենք չպետք է դադարեցնենք: Այն, ինչ ասում է Աստված, ճշմարտություն է, մենք վստահ ենք, որ նա դա անելու է, ինչ խոստացել է, իսկ մենք համբերությամբ սպասում ենք: Բայց, մենք պետք է շարունակենք մեր ճամապարհը, որպեսզի մեր սերն ու իմացությունը զարգացնենք: Մենք չենք դադարեցնում, մենք պայքարում ենք մեր թշնամու դեմ և մենք աշխատում ենք Աստծո գործի միասնության համար: Մենք ճանաչում ենք Աստծո ներկայությունը մեր մեջ իր խոսքով, առաքյալների միջոցով, Սուրբ Հաղորդության միջոցով և առօրյա կյանքում նրա օգնության միջոցով: Մենք չենք ուզում ետ վերադառնալ Եգիպտոս, մենք չենք ուզում այստեղ՝ երկրի վրա մնալ, մենք ուզում ենք լինել Աստծո արքայության մեջ, և մենք ուզում ենք միասին ոտք դնել այնտեղ: Եկեք հետևենք Քրիստոսին ու առաքյալներին մինչև վերջ և կիմանանք, որ Աստված հավատարիմ է, նա պահում է իր խոստումը:

Հիմնական մտքեր

Մենք գիտենք, որ սիրված ենք Աստծո կողմից, և մենք վստահում ենք նրան: Մենք շարունակում ենք մեր հոգևոր զարգացումը և ապրում ենք Աստծո ներկայությունը մեր կողքին: Մենք ապրելու ենք նրա խոստման իրականացումը:

Սեպտեմբերի 22-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերն այցելեց Գամբիայի Բանջուլի համայնք, հյուրընկալողը շրջանային առաքյալը Ռայներ Շթորքն էր (աջից երկրորդը)

Լուսանկարները՝ ՄԱԵ Գամբիա

Աստծո խոսքը պարզ լեզվով

Հավատք, ուսմունք, քարոզներ՝ ամեն ինչ հիմնված է Աստվածաշնչի վրա: Ահա թե ինչու շատ կարևոր է, որ հոգևորականները և համայնքներն իմանան այդ մասին: Բայց Սուրբ Գիրքը չի կարող պարզապես կարդացվել մյուս գրքերի նման- ցուցումներ գլխավոր առաքյալի հետ ժամերգությունից:

Մխիթարություն, ուժեղացում, օրհնություններ՝ Որոշ մարդիկ ցանկանում են տեսնել հրաշքներ: Բայց՝ «Մեր Աստվածն այդպես չի աշխատում»: Ավելի շուտ՝ «Աստված ցանկանում է խոսել մարդկանց հետ: Եվ նա ցանկանում է, որ մարդիկ լսեն իրեն: Եվ, ահա թե ինչու է մեր եկեղեցում քարոզն այդքան կարևոր»: Այս մասին սեպտեմբերի 22-ին Բանջուլում (Գամբիա) ասաց գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը: «Զոհասեղանից ասված ամեն խոսքը չէ, որ Աստծո խոսքն է»: Քարոզը անկատար է, քանի որ դա անկատար մարդն է, ով քարոզում է: Այնուամենայնիվ, «Սուրբ Հոգին կարող է զորացնել՝ չնայած այս անկատարությանը»:

«Աստվածաշնչի լավ իմացություն է պետք»՝ որովհետև «Աստվածաշունչը մեր հավատքի հիմքն է: Այսպիսով, սպասավորները պետք է իմանան Աստվածաշունչը»: Եվ ի դեպ՝ «Հավատացյալներն էլ պետք է իմանան Աստվածաշունչը: Քանի որ, հակառակ դեպքում, դժվար է հասկանալ քարոզի իմաստը»: Ավելին՝ «Աստվածաշունչը կարդալը տալիս է Աստծու մխիթարություն և իմաստություն»:

Գիրք, որը նման չէ ուրիշներին

«Մարդ չի կարող կարդալ Աստվածաշունչը, ինչպես մեկ այլ գիրք է կարդում»՝ որովհետև՝ «Այն, ինչ գրված է Սուրբ Հոգով, պետք է կարդալ նաև Սուրբ Հոգով ներշնչված: Հակառակ դեպքում, դուք իսկապես չեք կարող դա հասկանալ»:

Կանոնների և օրենքների ժողովածու - այսպես են բնութագրում օրենսգետները Սուրբ Գիրքը:Բայց՝ «Հիսուսն ասաց՝ «Սա չէ Սուրբ Գրքի ճշմարիտ հասկացողությունը»: Այլ՝ «Նա, ով ներշնչված է Սուրբ Հոգուց, գիտի, որ բոլոր Գրքերը վկայում են Հիսուս Քրիստոսին,,:

Երկնքի և երկրի միջև

«Դա Հիսուսի ժամանակ էր: Իսկ ինչ է լինում մեզ հետ մեր օրերում,,- հարցրեց գլխավոր առաքյալը և զգուշացրեց գրությունները սխալ մեկնաբանելուց:

- «Աստվածաշունչը չի կարող փոխարինել գիտությանը»; որովհետև տեքստերն արտացոլում էին իրենց ծագման ժամանակի գիտելիքները: Այսպիսով, հեղինակները կարծում էին, որ արևը պտտվում է երկրի շուրջը (Հեսու 10:12) , և, որ երկիրը հարթ է (Հայտնություն 7:1):
- «Աստվածաշունչը չի կարող որոշումներ կայացնել»՝ որովհետև՝ «Աստված չի ուզում մեր փոխարեն որոշումներ կայացնել: Սուրբ Հոգին մեզ ասում է միայն այն, ինչ մենք պետք է հաշվի առնենք մեր որոշումը կայացնելու համար: Բայց, մենք ինքներս պետք է որոշենք»:

Այս համատեքստում եկեղեցու առաջնորդը վկայակոչեց մի խոսք՝ «Աստվածաշունչը մեզ չի բացատրում երկինքն ու երկիրը, այլ ասում է, թե ինչպես պետք է ապրենք երկրի վրա, որպեսզի հասնենք դրախտ»:

Շրջանային Առաքյալ Կուբուբա Սոկոն սեպտեմբերի 22-ին Գամբիայում ծառայեց ժամերգության ժամանակ

Ճիշտ հասկանալ հակասությունները

«Անիմաստ է» որոշումներ կայացնել՝ հիմնվելով Աստվածաշնչի առանձին հատվածների վրա: Շատ կետերում կարելի է գտնել ամեն ինչ Աստվածաշնչում, իսկ հետո նաև՝ ճիշտ հակառակը: Քարոզը բացահայտում է որոշ հակասություններ.

- Երբեմն Աստված ցանկանում է, որ Իսրայելի ժողովուրդը կռվի, երբեմն՝ ոչ: Երբեմն Հիսուսը ցանկանում է, որ աշակերտները գնան միայն հրեաների մոտ, երբեմն նրանք պետք է գնան հեթանոսների մոտ: «Պատկերացրեք, բացեք Աստվածաշունչը և գտնեք այս նախադասություններից միայն մեկը»:
- Ա Կորնթացիներին 7.26-33-ում Պողոսը խորհուրդ է տալիս, որ ամուսնությունը չպետք է արվի Տիրոջը հաճոյանալու համար: Բայց 1-ին Տիմոթեոս 4:1-3-ը կեղծ ուսուցիչներ է անվանում նրանց, ովքեր խորհուրդ են տալիս ամուսնությունից հրաժարվել: «Ուրեմն Պողոսը սուտ ուսուցի՞չ էր»:
- 1-ին Տիմոթեոս 2-ում նախ ասվում է, որ Աստված ցանկանում է փրկել բոլոր մարդկանց: Իսկ մի քանի համար հետո ասվում է, որ կանայք կարող են փրկվել միայն երեխա ունենալու դեպքում: Դա կնշանակի, որ Աստված փրկություն է ուզում բոլորին, բացառությամբ այն կանանց, որոնց ինքը թույլ չի տալիս երեխաներ ունենալ:

«Ինչ վերաբերում է մարդկային ըմբռնմանը, այնտեղ մենք մեծ խնդիր ունենք»: Բայց, «Աստված ասում է՝ «Օգտագործիր Սուրբ Հոգին բաները հասկանալու համար: Եվ քեզ օգնելու համար ես առաքյալներին ուղարկեցի»: Նրանք ունեն Աստվածաշունչը մեկնաբանելու առաջադրանք և լիազորություն:

Ճիշտ լուսաբանել պատգամները

«Երբ մենք կարդում ենք Հին կտակարանը Սուրբ Հոգու լույսի ներքո, ի՞նչ կարող ենք զգալ»,- հարցրեց եկեղեցու առաջնորդը և պատասխանեց՝ «Աստված սիրում է անվերապահորեն: Նա հավատարիմ է և կատարում է իր բոլոր խոստումները: Նա ակնկալում է, որ մարդիկ հավատան և վստահեն իրեն: Նա խնդրում է մեզ՝ սիրել Աստծուն և մերձավորին: Ընտրությունը հիմնված է շնորհի և ոչ թե՝ վաստակի վրա. Դա ծառայելու կոչ է»:

Պատգամները Նոր կտակարանից՝ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, ով եկավ երկիր: Փրկությունը բաղկացած է հավերժական հաղորդակցությունից Քրիստոսի և Նրա հետ: Բոլոր մարդիկ կարող են փրկվել, եթե հավատան Հիսուս Քրիստոսին: Նրանք, ովքեր ցանկանում են պատրաստվել Տիրոջ վերադարձին, պետք է վերստին ծնվեն ջրից և Հոգուց, Սուրբ Հաղորդություն ստանան և հետևեն առաքյալի ուսմունքներին:

Գլխավոր առաքյալի եզրակացությունը՝ «Աստվածաշունչն իսկապես ուժի, մխիթարության և իմաստության հրաշալի աղբյուր է: Մենք պետք է ճանաչենք դրանք: Մենք պետք է կարդանք դրանք: Բայց մենք պետք է ոգեշնչվենք Սուրբ Հոգուց: Առաքյալն ուղարկվել է Հիսուսի կողմից, որպեսզի օգնի մեզ ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Եվ երբ մենք դա անում ենք, Աստվածաշնչում գտնում ենք այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է փրկության հասնելու համար»:

Հիմնական մտքեր

Հովհաննես 5,39

Քննեցեք Գրքերը, քանի որ կարծում եք, թե նրանցով հավիտենական կյանք կունենաք: Բայց այդ Գրքերն իսկ վկայում են իմ մասին:

Մեր հավատքը հիմնված է Աստվածաշնչի վրա: Եթե Աստվածաշունչը Սուրբ Հոգու լույսի ներքո է կարդացվում, ապա այն մխիթարության և իմաստության աղբյուր է հանդիսանում: Հիսուսը առաքյալներին վստահեց լիազորություն և առաջադրանք՝ Սուրբ Հոգու միջոցով դրանք մեկնաբանելու:

ՀԻՍՈՒՍԸ ԼՎԱՆՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՏՔԵՐԸ

ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 13, 1-20-Ի

Զատկի տոնից առաջ էր: Հիսուսը իմացավ, որ հասել է ժամը, որպեսզի այս աշխարհից Հոր մոտ փոխադրվի: Իր աշակերտների հետ նա տոնում է վերջին Ընթրիքը:

Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի գոգնոց կապեց: Ապա ջուր վերցնելով՝ ածեց կոնքի մեջ և սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և գոգնոցով չորացնել: Երբ նա մոտեցավ Պետրոսին, նա ասաց՝,, Տեր, դու՞ ես իմ ոտքերը լվանում,,: Հիսուսը պատասխանեց՝ ,,Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց հետո կիմանաս,,:
Ապա Պետրոսը ասում է նրան՝,, Իմ ոտքերը հավիտյան չես լվանա,,:
Հիսուսը պատասխանեց՝,, Եթե քեզ չլվանամ, ինձ հետ մաս չունես,,:
Պետրոսն ասաց նրան՝,, Տեր, ոչ թե միայն իմ ոտքերը, այլև իմ





ձեռքերն ու գլուխն էլ լվա,,։
Հիսուսը նրան ասաց՝,,
Լվացվածին ուրիշ բան պետք
չէ, բայց միայն ոտքերը լվանալ,
քանի որ ամբողջությամբ
մաքուր է, և դուք մաքուր եք,
բայց ոչ բոլորդ,,։
Հիսուսը գիտեր, որ իր
աշակերտներից մեկը
դավաճանելու է իրեն։ Նա ասում
է աշակերտներին՝,, Գիտե՞ք, թե
այդ ինչ արեցի ձեզ։ Դուք ինձ
վարդապետ և Տեր եք
կոչում, և լավ եք անում,
քանի որ իսկապես
ես եմ, իսկ արդ՝ եթե
ես՝ տերս և Վարդապետս,
լվացի ձեր ոտքերը, դուք
էլ պատրաստ եք միմյանց
ոտքերը լվանալու, որովհետև
մի օրինակ տվի ձեզ, որ,
ինչպես ես ձեզ արեցի,
դուք էլ նույն ձևով անեք։
Ճշմարիտ եմ ասում, ծառան
ավելի մեծ չէ, քան իր
տերը, և ոչ էլ ուղարկվածը՝
ավելի մեծ, քան նա, ով
նրան ուղարկեց։ Ով
որ ընդունի նրան,
ում ես կուղարկեմ,
ինձ է ընդունում,
և ով ինձ է ընդունում,
ընդունում է նրան, ով
ինձ ուղարկեց։

Աղբյուրը՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 04/02022, ձևավորումը՝ Միրելլա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԹԻՆ՝ ՆԴՈԼԱՅՈՒՄ / ԶԱՄԲԻԱ/

Մուլիշանի՞: Իքիբեմբա լեզվով սա նշանակում է՝ ,, Ինչպե՞ս ես,,; դա 72 լեզուներից մեկն է, որոնցով խոսում են Զամբիայում: Դա ամենաշատը խոսվող լեզուն է այն շրջանում, որտեղ ես եմ ապրում: Մենք այն անվանում ենք Քափըբելթ, գերմաներեն՝ պղնձե գոտի, քանի որ այստեղ պղնձի մեծ հանքեր են կառուցված: Ես ապրում եմ Նդոլա քաղաքում, Քափըբելթ նահանգի մայրաքաղաքում:

Ին անունը Դավիթ է, ծնվել եմ 2011-ի հունիսի 10-ին: Այսինքն՝ շուտով ես 11 տարեկան եմ դառնալու: Իմ ընտանիքը բաղկացած է հետևյալ անդամներից՝ հայրս, մայրս, հինգ տարեկան քույրս՝ Լուբութոն և ես: Իմ հայր Թրեվորը մեր համայնքի քարոզիչն է: Նա աշխատում է զամբիական հեռախոսային ձեռնարկություններից մեկի մարկեթինգի ոլորտում: Իմ մայր Մվեշին ֆիզիոթերապևտ է և աշխատում է մի մեծ հիվանդանոցում:

Ես սովորում եմ 6-րդ դասարանում: Իմ քույրը գալիս է այն նույն դպրոցը, որտեղ ես եմ սովորում, նա այնտեղ հաճախում է մանկապարտեզ: Իմ սիրած առարկաներն են՝ մաթեմատիկան, երաժշտությունը և անգլերենը:



Մենք բոլորս նորառաքելականներ ենք՝ այստեղ ես ձեզ ցույց եմ տալիս մեր եկեղեցին: Այն ամենամեծ եկեղեցին է Զամբիայում, այն շուրջ 5000 քույր-եղբայրների համար է նախատեսված: Արդեն երկու անգամ գլխավոր առաքյալն այստեղ ժամերգություն է անցկացրել: Եկեղեցին օծվել է 2014—հուլիսի 20-ին, այն ժամանակ ես 4 տարեկան էի:

Կիրակնօրյա դպրոցի պարապմունքները մենք անց ենք կացնում կիրակի օրերը՝ ժամերգությունից հետո: Երաժշտական պարապմունքները և երգչախմբի փորձերը տեղի են ունենում շաբաթ օրերին: Ես ամենփոքր մասնակիցն եմ մեր մարզի նվագախմբում, ես նվագում եմ ջութակ: Մյուս նվագողները շատ պատրաստակամ են ինձ օգնելու, հաճախ նրաք ինձ թույլ են տալիս ժամերգության ժամանակ և համերգներին դիրիժորություն անել: Երբեմն ես դիրիժորություն եմ անում նաև մանկական երգչախմբի համար: Ես սիրում եմ իմ համայնքը, կիրակնօրյա դպրոցի իմ ընկերներին, ուսուցիչներին և դիրիժորներին: Ես պարզապես սիրում եմ իմ եկեղեցին:

Տանը ես հաճույքով զբաղվում եմ երաժշտությամբ: Ես նվագում եմ սրինգ, ջութակ և դաշնամուր: Իմ քույրն էլ է հետաքրքրվում երաժշտությամբ, ես նրան ջութակ նվագել եմ սովորեցնում: Իմ երազանքն է, որ մի օր իմ եկեղեցում օգնեմ երաժշտական աշխատանքներին:

Եթե ես երաժշտությամբ չեմ զբաղվում, ապա հեռուստացույց են դիտում կամ համակարգչով եմ խաղում: Կամ ես հոգ եմ տանում իմ ճագարների համար, կերակրում են նրանց, պարզապես հիանալի է նրանց տեսնելը, թե ինչպես են նրանք թռչկոտում:

Զաբիայում հիմական սնունդը եգիպտացորենն է, օրինակ, եգպիտացորենի ալյուրից եփվում է հացահատիկային շիլան, որը չի բացակայում ոչ մի ուտեստի ժամանակ: Իմ ամենսիրելի ուտելիքը սամփն է, որը բաղկացած է եգպիտացորենի խոշոր կտրտած հատիկներից: Պիցցա էլ եմ սիրում: Ես հաճախ եմ օգնում մայրիկիս՝ ճաշ եփելիս: Ես արդեն կարողանում եմ բրինձ եփել, ձու տապակել և մի հեշտ նախաճաշ պատրաստել:



Աղբյուրը՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 04 / 2022; Լուսանկարները՝ մասնավոր; stock.adobe.com – pwollinga, vencav, sabino.parente, Friedemeier, creativenature.nl

Կանանց ձեռնադրություն՝ հիմքերը

Առաքյալները ,, Աստծո գաղտնիքների տնտեսներն են,, / Կորնթ. Ա 1/: Այն թեմաների պարագայում, երբ չկան աստվածաշնչյան միանշանակ պատասխաններ, առաքյալների ծառայությունը Սուրբ Հոգու օգնությամբ և բանականությամբ ընդունելի որոշումներ է կայացնում: Դրանց թվին է պատկանում այն հարցը, թե արդյոք տղամարդիկ ու կանայք հավասար արժանապատվություն ունեն պաշտոնի լիազորություն և պաշտոնի առաջադրանք ստանալու համար:

Գլխավոր առաքյալ Ֆեիրը իր պաշտոնավարման ժամանակաշրջանում բազմատեսակ պարզաբանումներ է տվել նորառաքելական եկեղեցու ուսմունքի վերաբերյալ: Նա ձեռնամուխ եղավ մի գրքի շարադրանքի, որտեղ ներկայացված կլինի նորառաքելական եկեղեցու ուսմունքը: Այդ ջանքերի արդյունքը եղավ դավանաբանությունը, որը լույս տեսավ 2012-ին, գլխավոր առաքյալ Լեբերի պաշտոնավարման ժամանակահատվածում:

Եկեղեցու նորառաքելական ըմբռնումը այնուհետև զարգացավ Նորառաքելական եկեղեցու դավանաբանության մեջ, որտեղ որոշիչ դեր է խաղում տեսանելի և սխալական եկեղեցիների և Հիսուս Քրիստոսի անտեսանելի ու կատարյալ եկեղեցու տարբերությունը: Այնուամենայնիվ, պաշտոնի վերաբերյալ իրական ուսմունքը դեռևս չէր կարող ներկայացվել դավանաբանությունում: Դրանում, սակայն, նշվեցին պաշտոնի մասին ապագա ուսմունքի որոշ էական ասպեկտներ և բացվեցին մտքի ուղիներ:

Որպես դրա օրինակ՝ հղում է արվում հավատքի հինգերորդ դրույթի բացատրություններին, որտեղ տարբերակում է արվում պաշտոնի և ծառայության միջև և նշվում են ձեռնադրության հիմնական տարրերը. ,, Մարդը, -այսպես է արտահայտվում հավատանքի դրույթի մեջ,- կրում է իր պաշտոնը աստվածային կամքով և ոչ թե մարդկային որոշմամբ: Սա իրականացվում կամ կատարվում է առաքյալներիի ծառայության կողմից: Պաշտոնը և առաքելոց ծառայությունը ուղղակիորեն կապված են: Հետևաբար, որտեղ առաքելական ծառայությունն ակտիվ է, այնտեղ կա նաև հոգևոր պաշտոն (տես 7): Բացի այդ, Քրիստոսի եկեղեցում Ավետարանի տեղեկացման և հավատացյալների բարօրության համար կան բազմաթիվ ծառայություններ, որոնք կարող են կատարվել նաև առանց ձեռնադրության [...] Հոգևոր պաշտոնի համար ձեռնադրությունը պարունակում է երեք ասպեկտ՝ «լիազորություն. օրինություն և սրբություն»: «Լիազորության» տարրը վճռորոշ նշանակություն ունի հատկապես քարոզիչ սպասավորների դեպքում, քանի որ նրանք իրավասու են առաքյալի անունից հայտարարելու մեղքերի թողություն և մատուցելու Սուրբ Հաղորդությունը: Քարոզիչ սպասավորները, հետևաբար, մասնակցում են առաքյալների կողմից եկեղեցական խորհուրդների ճիշտ կառավարմանը: Աստծո համընդհանուր փրկարար կամքի ճիշտ տեղեկացումը տեղի է ունենում նաև առաքյալի շնորհած «լիազորության» միջոցով: «Օրինության» միջոցով աստվածային ուղեկցությունն ու Սուրբ Հոգու օգնությունը խոստացված են թե՛ քարոզչական և թե՛ սարկավագական ծառայության իրականացման ժամանակ: «Սրբացումը» ցույց է տալիս, որ Աստված ինքն իր սրբությամբ և անձեռնմխելիությամբ ցանկանում է գործել պաշտոնի միջոցով»:

Պաշտոնի մասին նորառաքելական հայեցակարգի ձևավորման ուղղությամբ աշխատանքները սկսվել են 2014 թվականին: Այնուհետև 2019 թվականին լույս է տեսել «Հոգևոր պաշտոնի նորառաքելական ըմբռնումը – Մեկնություն ՆԱԵԴ 7»-ի շարադրանքը: Պաշտոնի մասին այդ մեկնաբանություններում պաշտոնի լիազորությունն ու պաշտոնի առաջադրանքը էական հասկացություններ են: Դրանք հակիրճ կքննարկվեն ստորև:

Եզրակացություն. Առաքյալների ծառայությունը՝ առաքյալները գլխավոր առաքյալի հետ միասին, խնդիր ունի Սուրբ Հոգու առաջնորդությամբ ապահովելու համայնքներում պատշաճ կարգուկանոնը: Հնարավորության հարցը, թե արդյոք տղամարդիկ և կանայք հավասարապես արժանի են պաշտոնի լիազորություն և պաշտոնի առաջադրանք ստանալու, այն հարցերից է, որ առաքյալների ծառայությունը պետք է պատասխանի և որոշի ապագայի համար:

Պաշտոնի լիազորություն և պաշտոնի առաջադրանք

Դավանաբանությունն արդեն ընդգծում է, որ «լիազորության» պահը վճռորոշ նշանակություն ունի» (ՆԱԵԴ 2.4.5): Դավանաբանության մեջ խոսվում է նաև առաջադրանքի մասին՝,, Սպասավոր եղբայրը իր առաջադրանքը կատարում է իրեն տրված լիազորության շրջանակում: Դրա համար նա առաջադրանք է ստանում իր առաքյալից, ով նրան աշխատանքային ոլորտ է հատկացնում» (ՆԱԵԴ 7.8): Պաշտոնի ըմբռնման վերոհիշյալ շարադրանքում՝ հիմվելով շրջանային առաքյալների ժողովի որոշման վրա, ասվում է հետևյալը՝ «Պաշտոնը ներառում է և՛ պաշտոնի լիազորությունները, և՛ պաշտոնի առաջադրանքը: Պաշտոնի լիազորությունը աստվածաբանական բնույթ է կրում, պաշտոնի առաջադրանքը՝ եկեղեցական-կանոնական,,:

- Պաշտոնի լիացորության սահմանումը՝ Պաշտոնի լիազորությունը Հիսուս Քրիստոսի վրա հիմված և առաքյալի կողմից Սուրբ Հոգու զորությամբ ձեռնադրված իրավունքն է՝ գործելու և խոսելու եռամիասնական Աստծո անունով: Պաշտոնի լիազորությունը տրվում է ձեռնադրությամբ: Այն ավարտվում է առաքյալի կողմից պաշտոնի հրաժարականի ընդունմամբ, պաշտոնից հեռացնելու կամ մահվան պատճառով:
- Պաշտոնի առաջադրանքի սահմանում՝ Պաշտոնի առաջադրանքով սպասավոր եղբայրը ստանում է իրավունք և պարտականություն՝ իրականացնելու իրեն վերապահված պաշտոնի լիազորությունները՝ տարածական և ժամանակային սահմանված շրջանակներում: Ծառայությունն ավարտվում է իրավասության շրջանակի փոփոխության, թոշակի անցնելու, առաքյալի կողմից հրաժարականի ընդունմամբ, պաշտոնից հեռացնելու կամ մահվան պատճառով»:

Պաշտոնի լիազորությունը, ի թիվս այլ բաների, վերաբերում է եկեղեցական խորհուրդների վարմանը, Աստծո խոսքը քարոզելու և ձեռնադրելու իրավունքին: Պաշտոնի առաջադրանքով կարգավորվում է այն համատեքստը, որում պետք է իրականացվի պաշտոնի լիազորությունը համայնքում, մարզում, տարածաշրջանային եկեղեցում: Այս առումով, տեղին է պաշտոնի առաջադրանքը ընկալել որպես կանոնական, հետևաբար և պրագմատիկ չափ:

Ո՛չ դավանաբանությունում, ո՛չ էլ պաշտոնի ըմբռնման վերաբերյալ հետագա բացատրություններում հստակորեն նշված չէ, որ պաշտոնի լիազորությունները և պաշտոնի առաջադրանքը կարող են փոխանցվել միայն տղամարդկանց: Հենց «պաշտոնը կրողներ» տերմինը հուշում է, որ նշվածները պետք է լինեն տղամարդիկ: Բացի այդ, պաշտոնի համատեքստում, սակայն, օգտագործվում է նաև գենդերային չեզոք լեզու. «Մարդն իր պաշտոնն իրականացնում է աստվածային կամքի հիման վրա և ոչ թե՝ մարդկային որոշման» (ՆԱԵԴ 2.4.5):

Եզրակացություն՝ Աստվածաբանական հիմնավորում այն փաստի համար, որ միայն տղամարդիկ կարող են ձեռնադրվել, չկա մեր եկեղեցում պաշտոն հասկացության մասին գրություններում: Հետևաբար, հարց է առաջանում, թե արդյոք հոգևոր պաշտոնի սահմանափակումը միայն տղամարդկանց շրջանակով, որը պայմանավորված է երկրորդ դարից ի վեր ընդհանուր քրիստոնեական ավանդույթով, հիմնավոր է աստվածաշնչյան վկայության տեսանկյունից: Արծարծված խնդրին չի կարելի պատշաճ պատասխան տալ՝ մատնանշելով հասարակության մեջ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները, որն արտահայտված է բազմաթիվ պետությունների սահմանադրություններում, այլ՝ աստվածաշնչյան բացահայտումների աստվածաբանական գնահատմամբ: Այս համատեքստում, Աստծո պատկերով մարդու մասին աստվածաշնչյան խոսակցությունը, ինչպես այն առկա է արարչագործության պատմություններում, վճռորոշ նշանակություն ունի:

Մարդու նմանությունն Աստծուն

Արարչագործության մասին Հին կտակարանի երկու պատմությունները, որոնք գտնվում են Ծննդոց 1:1-2:3 և Ծննդոց 2:4-3 հատվածներում, ամենակարևոր աստվածաբանական հիմքն են մարդու մասին՝ որպես Աստծո պատկերով ստեղծված, խոսելու համար: Թեև արարչագործության առաջին պատմությունն ավելի վերացական բնույթ ունի, արարչագործության երկրորդ պատմությունը չափազանց պատկերավոր և պատմողական է:

Արարչագործության առաջին պատմությունը

Այն ձևակերպումը, որ մարդը Աստծո պատկերով է ստեղծված, գտնվում է Ծննդոց 1.26-27-ում: Բացի այդ, Ծննդոց 5:1.2 և Ծննդոց 9:6 համարները

խոսում են այն մասին, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով: Արարչագործության առաջին պատմության մեջ Աստված ներկայացվում է որպես նա, ով ստեղծում կամ ձևավորում է իրականությունը վեց օրվա ընթացքում, այսինքն՝ ժամանակի ընթացքում, բացառապես իր խոսքով: Արարման իրադարձության վերջին փուլում՝ վեցերորդ օրը, առաջինը ստեղծվում են գետնի վրա ապրող կենդանիները (Ծննդոց 1:24,25): Տարբեր գազանների արարելուց հետո Աստված դիմում է մարդու ստեղծմանը.

«Եվ Աստված ասաց՝ «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Եվ Աստված օրհնեց նրանց և ասաց՝ ,, Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրանք, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդոց 26-28):

Մարդու արարումը տարբերվում է մնացած բոլոր իրերի և կենդանի էակների արարչագործությունից: Սա արդեն երևում է նրանից, որ «Թող լինի...» ասված է ոչ թե չեզոք ձևով, ինչպես դա եղավ արարչագործության մյուս գործերի դեպքում, այլ ավելի շուտ՝ եռամիասնական Աստծո ինքնահասցեագրության տեսքով. «Եկեք մարդ ստեղծենք...»: Մարդ ստեղծելու ինքնամարտահրավերը ընդլայնվում և մեծանում է նրանով, որ Աստված իրեն անմիջական հարաբերությունների մեջ է դնում մարդկանց հետ, քանի որ նրանք պետք է լինեն՝ «պատկեր» «մեզ նման»: Աստված այսպիսով իրեն դնում է անդառնալի հարաբերությունների մեջ մարդու հետ, և մարդը նույնքան անդառնալի հարաբերությունների մեջ է դրվում Աստծո հետ:

Ծննդոց 1.27-ում Աստված կատարում է այն, ինչ նա որոշել է անել. Նա տղամարդուն ստեղծում է «իր պատկերով»՝ որպես «տղամարդու և կնոջ հոգնակի միավոր»: «Մարդ» այստեղ օգտագործվում է որպես ընդհանուր տերմին և բովանդակային առումով հստակեցվում է «տղամարդ և կին» կենսաբանական ճշգրտման միջոցով: Հետևաբար, երկու սեռերն ի սկզբանե և ըստ էության պատկանում են Աստծո պատկերով ստեղծված մարդուն: Տղամարդն ու կինը միավորված՝ արտացոլում են Աստծո փառահողությունը, միավորված շարունակում են Աստծո արարչագործությունը: Նա իր վերևում ունի միայն Աստված: Նա կանգնած է Աստծո և աշխարհի միջև:

Տղամարդը կամ կինը, այսինքն՝ «մարդը», երկուսն էլ ստեղծված են Աստծո պատկերով, երկուսն էլ նույնական են, այսինքն՝ ուղղակի և անվերապահ կախվածության մեջ են Աստծուց: Հետևաբար, տղամարդն ու կինը արարելու նույն լիազորությունն ունեն, այն է՝ «կառավարել» և ներկայացնել Աստծուն արարչագործության մեջ: Բացի այդ, հոգնակի միավորը ցույց է տալիս, որ եսակենտրոնության և ընտրված մեկուսացման մեջ գտնվող մարդիկ չեն կարող իրականում կատարել իրենց մարդասիրությունը, այսինքն՝ Աստծո պատկերով լինելը: Հոգնակի միավորը կոնկրետանում է միայն «դու-ին փոխադարձ անցնելու ժամանակ»:

Տղամարդն ու կինը, կինը և տղամարդը միասին են, որովհետև մարդիկ ի սկզբանե ստեղծված են համայնքի համար: Մարդը՝ որպես տղամարդ և կին, օրհնված է Աստծո կողմից, առաջադրանք է ստացել նրանից. «Աճեցե՛ք և շատացե՛ք, լցրե՛ք երկիրը և տիրե՛ք նրան»: Մարդուն պատվիրված է սերունդ տալ: Այս կերպ նա պետք է կատարի Աստծուն արարչագործության մեջ ներկայացնելու և երկիրը իրեն «հնազանդեցնելու» խնդիրը պատմության ընթացքում:

Արարչագործության երկրորդ պատմությունը

Մինչ արարչագործության առաջին պատմությունը հայացք է նետում աշխարհին որպես ամբողջություն և բաժանում է նրա արարումը վեց դարաշրջանների, արարչագործության երկրորդ պատմությունն ունի պատմվածքի ձև՝ միմյանց արձագանքող կերպարներով: Արարչագործության երկրորդ պատմությունը ներկայացնում է մի տեսակ «շարունակություն», թեև այն ավելի վաղ ժամանակի է և գալիս է ավանդույթի այլ գծից: Արարչագործության երկու պատմությունները միմյանցից անջատված չեն, այլ կապված են միմյանց հետ՝ նոր միավոր կազմելու համար: «Եդեմի պատմությունը» հասկացվում է որպես կենդանի էակների ստեղծման մասին պատմության մեկնաբանություն ընդհանրապես, և մարդու մասին՝ առանձնապես:

Ծննդոց 2.7-ում հաղորդվում է, որ մարդը Աստծու կողմից ստեղծվել է հողից: Ինչպես բրուտը, Աստված փոշուց մի կերպար է ստեղծում: Ադամ անվանումն այստեղ նշանակում է մարդ ընդհանրապես՝

չտարբերակելով նրան ըստ սեռի: Ադամ բառը վերաբերում է Ադամային, երկրին, հողին, որից ստեղծվել է մարդը:

Ապշեցուցիչ է, որ այստեղ բացակայում է Աստծո պատկերով ստեղծված լինելու գաղափարը, որը հիմնարար նշանակություն ունի Ծննդոց 1:27-28-ում մարդու արարչագործության համար: Այնուամենայնիվ, կա Աստծո համապատասխան գործողություն, այն է, որ նա փչում է մարդկանց վրա, որպեսզի նրանց կյանքի շունչ տա: Այն կերպարը, որ Աստված ստեղծեց հողից, անմիջապես նրանից է ստանում կյանքի շունչը: Աստված դիմում է մարդուն պարտավորեցնող, այո, մտերմիկ ձևով, որը նա չի անում որևէ այլ արարածի հետ: «Կյանքի շունչը», որը ստանում է ձևավորված կավը, ոչ միայն հանգեցնում է ֆիզիկական կենսունակության, ինչպես բնորոշ է կենդանիներին, այլև ստեղծում է նրա անհատականության նախադրյալը: Կյանքի շունչը միևնույն ժամանակ Աստծո շունչն է, և հետևաբար, արարչագործության մեջ մարդու եզակիության պատճառն է: Այսպիսով, «եդեմական պատմության մեջ նույնպես մարդկային ստեղծագործությունը դրված է Աստծո պատկերով ստեղծված լինելու համատեքստում»:

Մարդու առանձնահատուկ դիրքը, նրա առաջադրանքը՝ որպես «Աստծո պատկեր» արարչագործության մեջ, արտահայտված է նաև արարչագործության երկրորդ պատմության մեջ: Մարդը դառնում է «կենդանի էակ», մեկը, ով կարող է և պետք է ձևավորի իր միջավայրը. «Եվ Տեր Աստված վերցրեց մարդուն և դրեց Եդեմի պարտեզում, որ մշակի և պահպանի այն» (Ծննդոց 2.15): «Մշակել» և «պահել» կառուցողական գործողություններ են, որոնք հանձնարարված են մարդուն, ահա Ծննդոց 1:26f-ում առկա է «կառավարելու» հստակ զուգահեռը:

Ծննդոց 2:18-ն արտահայտում է այն փաստը, որ մարդկային կյանքը միշտ պետք է ապրի համայնքում. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի»: Սրան պետք է համապատասխանի «օգնությունը», որը պետք է ստեղծվի մարդու համար: Բառացի թարգմանությամբ 18բ հատվածը կարդացվում է՝ «օգնություն նրան»: Այս «օգնողը» որակում է, այսինքն՝,,նմանակ,,: Մարդը պետք է ունենա նմանակ, որը ոչ միայն «հետ» է և «կողքին», այլ ով հավասար հիմունքներով հանդիպում է նրան և ում ներկայությամբ Ադամը ճանաչում է իրեն:

Ծննդոց 2:22-23-ում խոսվում է այն մասին, թե ով է համապատասխանում մարդուն, ով է նրա նմանակը: Այս օգնությունն այժմ ստեղծված է ոչ թե հողից, այլ արդեն ստեղծված է մարդու մարմնից: «Կողոսկրը», որից Աստված ստեղծեց կնոջը, խորհրդանիշ է, որ տղամարդու և նրա նմանակի մարմինը նույն բնույթն ունեն: Շեշտվում է մարդու և նրա գործընկերոջ միջև ֆիզիկական միասնությունը. «Այժմ դա իմ ոսկորից ոսկոր է և իմ մարմնի մարմինը. նրան կին կանվանեն, որովհետև արականից է վերցված»:

Ադամը՝ այն մարդ արարածը, ով արարվել է առանց որևէ սեռական հատկորոշման, որի մեջ պարունակվում է սեռականության ներուժը, այժմ կարողանում է իրեն բնութագրել որպես տղամարդ, իսկ մյուսին՝ որպես կին բացահայտել: Երկուսի միջև կա ֆիզիկական միասնություն, դրանք պատրաստված են նույն «նյութից»: Տղամարդը և կինը հավասարապես ձևավորվել են Աստծո կողմից, երկու դեպքում էլ նրանք ձևավորվել են գոյություն ունեցող «նյութերից» և պարտական են Աստծո անմիջական գործողությանը:

Տղամարդու և կնոջ միջև հիերարխիա առաջարկվում է միայն մեղքի մեջ ընկնելու պատմությունից հետո (Ծննդոց 3:1-24) Ծննդոց 3:16-ում: Մարդու «տիրակալությունը», որի մասին խոսվում է մեղքի մեջ ընկնելուց հետո և, հետևաբար, կարող է դիտվել որպես մեղքի հետևանք, իր առաջին անմիջական արտահայտությունն է գտնում Ադամի կողմից կնոջ անվանման մեջ. «Եվա; քանզի նա եղավ բոլոր կենդանիների մայրը» (Ծննդոց 3.20): Այս անվանակոչումը զուգահեռ է Ծննդոց 2.20-ում գրվածին. «Եվ մարդը դաշտի ամեն գազանին իր անունը տվեց»: Այս համատեքստում կինը այժմ ենթարկվում է տղամարդուն:

Եզրակացություն. Արարչագործության մասին Հին կտակարանի երկու արձանագրություններում արտահայտված է Աստծո և մարդու սերտ հարաբերությունները: Ադամը, այսինքն՝ մարդ արարածը որպես տղամարդ և կին, ստանում է իշխելու (Ծննդոց 1:26f.) և «մշակելու» և «պահելու» հրամանը: Երկուսի միջև կա ֆիզիկական միասնություն, դրանք պատրաստված են նույն «նյութից»: Տղամարդու և կնոջ հիերարխիզացիայի մասին միտքը առաջարկվում է միայն մեղքի մեջ ընկնելու պատմությունից հետո (Ծննդոց 3:1-24) Ծննդոց 3:16-ում:

Ի՞նչ աստվածաբանական հետևանքներ է տեսնում Նորառաքելական եկեղեցին աստվածաշնչյան այս մոտեցումից: Կոմյունիթիի 02/23 համարում ներկայացվելիք տեսության հաջորդ մասը վերաբերում է դրան:

Տեղեկատու

01.01.2023	Այբնշթոք (Գերմանիա)
06.01.2023	Լոդվար (Քենիա)
08.01.2023	Նաիրոբի (Քենիա)
15.01.2023	Բիթիգհայմ-Բիսսինգեն (Գերմանիա)
03.02.2023	Դոլիսի(Կոնգոյի Հանրապետություն)
05.02.2023	Փոինթե Նոիրե (Կոնգայի Հանրապետություն)
26.02.2023	Փրարիա(Քափ Վերդե)
05.03.2023	Բուխարեստ (Ռումինիա)
12.03.2023	Վուդբրրի NY (ԱՄՆ)
19.03.2023	Լյունեբուրգ(Գերմանիա)
25.03.2023	դեռ հաստատված չէ(Տոգո)
26.03.2023	դեռ հաստատված չէ (Բենին)

New Apostolic Church
International